ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

ՔԱՂՎԱԾՔ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ 1965 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐ 7-Ի ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության ներքո, 1965 թվականի սեպտեմբերի 7-ին գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի նիստը, ուր մասնավոր կարևորությամբ քննվում է **«Մի քանի քահանաների կողմից իրենց պաշտոնը լքելու և արտասահման մեկնելու մասին»** հարցը:

Գերագույն հոգևոր խորհուրդը մտքերի փոխանակությունից հետո ընդունում է հետևյալ որոշումը.

«Գերագույն հոգևոր խորհուրդը, եկեղեցական կանոնների լույսի տակ, նման դէպքը համարում է եկեղեցական անկարգութիւն և որոշում է.

Խստիվ պահպանել եկեղեցական կանոնը և խնդրել Վեհափառ Հայրապետին ի յարկին կարգալուծման պատիժ սահմանել անսաստողներին: Ժողովը անհրաժեշտ է գտնում սույն որոշումը յայտնել թեմերին ի գիտութիւն»:

*
* *

Այնուհետև, 1966 թվականի հունիսի 25-ին Մայր Աթոռի դիվանի կողմից հրատարակվում է հայրապետական վճիռ տ. Սարգիս քահանա Անդրեասյանի կարգալուծման մասին՝ ի գիտություն հայ եկեղեցու նվիրապետական Աթոռների և ազգային-եկեղեցական մարմինների.

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Մայր Աթոռ ս. Էջմիածնի դիւանը այսու լիազօրուած է ծանուցանելու ի գիտութիւն հայ եկեղեցոյ նուիրապետական Աթոռներին և ազգային-եկեղեցական մարմիններին, թէ Ամենայն Հայոց Հայրապետի վճիռով կարգալուծ եղած է Արարատեան թեմից տ. Սարգիս քահանա Անդրէասեանը, որ դրժել է իր ծառայութեան ուխտը ու լքել իրեն վստահուած հօտը առանց յարգելի պատճառի և առանց հոգեւոր վերին իշխանութեանց արտօնութեան և հակառակ վերջին մի տարուայ ընթացքում բազմիցս եղած յորդորներին և նախազգուշացումներին Արարատեան թեմական խորհուրդի և Գերագոյն հոգեւոր խորհուրդի կողմից:

Վերոյիշեալ կարգազուրկ քահանան դասւում է աշխարհականների շարքը իր նախկին Սարգիս Անդրէասեան անունով:

ԴԻՒԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ

25 յուլիսի 1966 թ.
Ս. Էջմիածին